## ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

*Դիւանի շրջաբերական գրութիւններ Ռուսահայոց թեմակալ Առաջնորդների անունով, որոնցով խնդրուեց յայտնել իրենց ստորադաս թեմական տեսուչներին, հոգաբարձութիւններին և ուսուցչական խմբերին, որ Նորին Վեհափառութեան հրամանով վերակազմուել է Մայր Աթոռի կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովը։ 1 Նոյեմբերի, Թ. Թ.* 2383—2388։

*Կոնդակ Սինոդի անունով, որով ուղարկելով Տ. Գրիգորիս աբեղայ Նարամիշեանի ձեռնադրութեան վկայականը՝ առաջադրուեց վաւերացնել այն և յանձնել ըստ պատկանելոյն և Նորա ռոճկի յաւելման մասին անել անհրաժեշտ կարգադրութիւն։ 1 Նոյեմբերի, Թ.* 2389։

*Դիւանի գրութիւն Լարինսկի 1-ին կոզակ գնդի զինւորական քահ. Հ. Թէօդոր Տատարինովի անունով, որով յայտնուեց նորան Նորին Վեհափառութեան օրհնութիւնը՝ Նորա հայոց եկեղեցուն ցոյց տուած քրիստոնէական վերաբերմունքի համար և խնդրուեց Մշոյ դաշտից բերած հայոց եկեղեցական զանգը կարգադրել ուղարկել Ս. Էջմիածին։ 2 Նոյեմբերի, Թ.* 2390։

*Դիւանի գրութիւն Տ. Գիւտ աբեղայի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութեան բարեհաճ կարգադրութեամբ կարգուած է Նախագահ Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան։ 3 Նոյեմբերի, Թ.* 2396։

*Դիւանի գրութիւն Տ. Գրիգորիս աբեղայ Նարամիշեանի անունով, որով յայտնուեց, որ կարգուած է Նորին Սրբութեան հրամանով անդամ Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան։ 3 Նոյեմբերի, Թ.* 2397։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան անունով, որով յայտնուեց ի գիտութիւն, որ Նորին Սրբութեան հրամանով Տ. Գիւտ աբեղան կարգուած է Նախագահ Վարչութեան, իսկ Տ. Գրիգորիս աբեղան՝ անդամ: 3 Նոյեմբերի, Թ. 2398:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Կլիվլենտ քաղաքից Միքայէլ Արոյանեանի փոխադրած յօգուտ գաղթականների մի հարիւր քառասուն երկու (142) ռուբլին: 3 Նոյեմբ., Թ. 2399:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով ստացուած՝ ա) Տփխիսի Հայոց Կենտրոնական Յանձնաժողովից յօգուտ հայ փախստական որբերի—վեց հազար ռուբլի, բ) Բոստոնից՝ Սեդրաք Յակոբեանից յօգուտ գաղթականների—երեսուն (30) ռուբլի և գ) Մայկոպից Իւան Ալլահվերդեանից երեսուն և վեց (36) ռուբլի, ընդամենը՝ վեց հազար վաթսուն և վեց (6066) ռուբլի: 3 Նոյեմբ., Թ. 2400:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով որբերի պահպանութեան համար վեց հազար (6000) ռուբլու: 3 Նոյեմբ., Թ. 2401:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ դպրոցական Դրամագլխի տոկոսներից նպաստ Ղարաբաղի թեմի 14 գիւղական աղքատ դպրոցներին տարեկան մի հազար ինն հարիւր (1900) ռուբլի, թեմի ժամ. կառավարչի միջոցով: 5 Նոյեմբ., Թ. 2405:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ դպրոցական Դրամագլխի տոկոսներից նպաստ Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդի ներկայացրած 16 դպրոցներին տարեկան մի հազար չորս հարիւր (1400) ռ. նոյն Առաջնորդի միջոցով: 5 Նոյեմբերի, Թ. 2406:

Դիւանի գրութիւն պ. Սիրական Տիգրանեանի անունով, որով յանձնարարուեց կարգադրել ապահով եղանակով ուղարկել Ս. Էջմիածին Վարագայ վանքի գրադարանը: 5 Նոյեմբերի, Թ. 2414։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց փոխադրել Վանայ քաղաքագլուխ Թերզիբաշեանի անունով՝ մշակագործութեան համար երեք հարիւր (300) ռ.. 5 Նոյեմբերի, Թ. 2415։

Դիւանի գրութիւն Մայր Տաճարի Տ. Լուսարարապետի անունով, որով ուղարկուեց Մայր Տաճարում պահելու համար Տ. Ռուբէն աւագ քահանայ Բէկգիւլեանի ներկայացրած խաչը Ս. Հռիփսիմէ կուսի մասունքով: 5 Նոյեմբերի, Թ. 2418։

Կոնդակ Վրաստանի Հայոց Թեմի Տ. Առաջնորդի անունով, որով արտօնուեց բանալ Տփխիսի գաւառի Ղարաթափա գիւղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց: 5 Նոյեմբերի, Թ. 2423։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով ստացուած Հնչեշտի Յովհաննէս քահանայ Աբրահամեանից յօգուտ գաղթականների երկու հարիւր (200) ռուբլին: 5 Նոյեմբերի, Թ. 2424։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով ստացուած Կովկասեան Ա. հայկական բանակի սպաներից յօգուտ երկու հայ որբի, Ս. Աթոռի ճեմարանում իբրև իրենց սաների պահպանութեան համար երկու հարիւր քսան (220) ռուբլին: 5 Նոյեմբ., Թ. 2425։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Խաչմազից Գէորգ Ունանեանի փոխադրած յօգուտ

գաղթականների մի հարիւր քառասուն (140) ռուբլին։ 5 Նոյեմբերի, Թ. 2426։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայի Կարապետ քահ. Տէր-Մարտիրոսեանի միջոցով Արամ Ծիրացեանի փոխադրած յօգուտ գաղթականների մի հարիւր (100) ռուբլին։ 5 Նոյեմբ., Թ. 2427։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Մայր Աթոռի Գ. Ճեմարանի Վարչութեան 1916/17 ուսումնական տարուայ ծախքերի համար տասն և հինգ հազար (15000) ռուբլի։ 8 Նոյեմբ., Թ. 2428։

Կոնդակ Աստրախանի Թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով արտօնուեց բանալ Տուապսէ քաղաքում Հայոց եկեղեցական-ծխական դպրոց, համաձայն տեղի հայ ծխականների որոշման։ 8 Նոյեմբերի, Թ. 2433։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով յիսուն հազար (50,000) ռուբլու, որպէս զի գաղթականների և որբերի համար գնուած տաք հագուստի գինը վճարուի։ 11 Նոյեմբերի, Թ. 2440։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին գնդապետ Խուբեանի փոխադրած յիսուն (50) ռուբլին, որի կէսը յատկացնելու է յօգուտ Ս. Էջմիածնի, իսկ կէսը գաղթականների։ 11 Նոյեմբ., Թ. 2441։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Նոր-Նախիջեւանի Հայոց Կանանց Ընկերութեան փոխադրած յօգուտ հայ գերիների վեց հազար եօթ հարիւր վաթսուն (6760) ռուբլին։ 11 Նոյեմբերի, Թ. 2442.

*Դիւանի գրութիւն Կախաւանի Տ. Մելքիսեդեկ քահանայ Սըլդըրեանի անունով, որով յայտնուեց, որ ոչ Դըպրոցական դրամագլխի տոկոսներից և ո՛չ էլ որբոց և այրեաց գանձարանից մասնաւոր անհատների նպաստ չի տրուի, քանի որ այդ երկու գումարներն էլ իրենց որոշ նպատակն ունեն։* 12 *Նոյեմբերի, Թ.* 2446։

*Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Գէորգ վարդապետի անունով, որով պատուիրուեց ներկայացնել Դիւանին Վարագայ վանքի այն ձեռագիրը, որի մէջ գտնւում է «Պատմութիւն Փարիզ մանկանն և Վիենայու դստերն», որպիսի ձեռագիրը երեք ամիս ժամանակով խնդրել էր Լենինգրադի գիտութեանց ճեմարանը, գիտական նպատակով։* 12 *Նոյեմբ., Թ.* 2452։

*Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Կիևի Խորէն քահանայ Մնացականեանի փոխադրած տեղական հայ համայնքի կողմից յօգուտ հայ գաղթականների վեց հարիւր երեսուն* (630) *ռուբլին։* 14 *Նոյեմբ., Թ.* 2463։

*Կոնդակ Սինոդի անունով, որով յայտնուեց, որ Ս. Էջմիածնի միաբան Տ. Ներսէս վարդապետ Տէր Միքայէլեանը Ներքին Գործոց Նախարարի հաճութեամբ կարգուած է Նոր-Նախիջևանի փոխանորդ՝ առաջադրուեց փութով կարգադրութիւն անել այդ առթիւ։* 14 *Նոյեմբ., Թ.* 2464։

*Կոնդակ Վրաստանի Հայոց գերապատիւ Տ. Առաջնորդի անունով, որով արտօնուեց բանալ Ջալլուղ գիւղում Հայոց եկեղեցական-ծխական դպրոց։* 14 *Նոյեմբերի, Թ.* 2467։

*Կոնդակ նոյն Առաջնորդի անունով, որով արտօնուեց բանալ Կոջոր գիւղում Հայոց ծխական դպրոց։* 14 *Նոյեմբ., Թ.* 2468։

*Կոնդակ նոյն Առաջնորդի անունով, որով արտօնուեց*

բանալ Ջերդ, Կարալէթ, Ղարաղաջ և Ջէգվի գիւղերում ծխական դպրոցներ: 15 Նոյեմբ., Թ. 2470:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինօդին Ամերիկայից Դանիէլ Ատոմեանի փոխադրած հինգ հարիւր վաթսուն և ինն (569) ռուբլին յանձնել Նորա եղբայր Ատոմ Ատոմեանին՝ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով: 15 Նոյեմբերի, Թ. 2472:

Դիւանի գրութիւն Ղարսի փոխանորդ Տ. Իսահակ վարդապետի անունով, որով ուղարկուեց Նորին Սրբութեան նորա անունով տրուած Թ. 2471 հաւատարմագիրը, որով լիազօրում է կառավարել Ղարսում գտնուած հանգուցեալ բժ. Աղէքսանդր Տէր Յարութիւնեանի անշարժ կալուածը, որից գոյացած դրամը պարբերաբար ներկայացնել Սինօդին: 15 Նոյեմբ., Թ. 2473:

Նորին Սրբութեան մակագրութիւն Չիկագօ քաղաքում ապրող Նազար Պօլեանի խնդրագրի վրայ. «Ուղարկելով Սինօդին Նազար Պօլեանի գրութիւնը՝ ժամանակին ստանալու կտակած 3000 ռուբ. գումարը և գործադրելու իւր նպատակին»: 15 Նոյեմբ., Թ. 2474:

Դիւանի գրութիւն Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց. համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, տալ կոչումն աբեղայութեան և վեղար Աղէքսանդրապօլի գաւառի Դութնի Դշլաղ գիւղի Սիմէօն քահանայ Միրիմանեանին և կարգել Արգեազի ս. Խաչ վանքի ժամանակաւոր վանահայր: 16 Նոյեմբ., Թ. 2482:

Դիւանի գրութիւն պ. Սիրական Տիգրանեանի անունով, որով յանձնարարուեց անկորուստ ուղարկել Ս. Էջմիածին Վանի և շրջակայ եկեղեցիների գրքերն ու պատկերները: 16 Նոյեմբ., Թ. 2491:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ճեմա-

րանի Տեառն Տ. Գարեգին Ծ. վարդապետի անունով, որով յանձնարարուեց կարգադրել ճեմարանի աշակերտներից շաբաթական հերթական երգիչներ պատրաստել տալ Մայր Տաճարում երգելու համար։ 16 Նոյեմբ., Թ. 3494։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեցին Սինօդին հետեւեալ գումարները՝

ա) Ամերիկայի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետից՝ զանազան քաղաքներից, յօգուտ գաղթականների՝ մի հազար երեք հարիւր ութսուն հինգ (1385) ռուբ.։ 17 Նոյեմբ., Թ. 2496։

բ) Նիւ-Եօրքից Տ. Պահաթրեանից (Նիւ-Եօրքում ապրող Կիւրինցի հայերից) յօգուտ գաղթականների՝ մի հազար մի հարիւր ութսուն չորս (1184) ռուբլի։ 17 Նոյեմբ., Թ. 2497։

գ) Մարսէյլում հրատարակուող «Արմենիա» թերթի խմբագրութեան միջոցով Բրազիլիայի Րիօ-Դէ-Ժանէյրօ քաղաքի Ֆրանսիական լիցէի ուսուցիչների փոխադրած յօգուտ գաղթականների՝ երեք հարիւր իննսուն մի ռուբ. 27 կ. (391 ռ. 27 կ.)։ 17 Նոյեմբ., Թ. 2498։

դ) Պարսկա-Հնդկաստանի Հայոց Առաջնորդի ձեռքով դոքտոր Եղիազարեանի փոխադրած յօգուտ գաղթականների՝ հինգ հարիւր (500) ռուբլի։ 17 Նոյեմբ., Թ. 2499։

ե) Լոնդոնից Պետրոս Մինասեանի և այլոց փոխադրած յօգուտ գաղթականների չորս հարիւր քսան և մի ռուբ. 74 կ. (421 ռ. 74 կ.)։ 17 Նոյեմբ., Թ. 2500։

զ) Պետրօգրադի Լիօնի Կրեդիտ Դրամատան միջոցով ստացուած յօգուտ գաղթականների չորս հազար հինգ հարիւր իննսուն (4590) ռուբլի։ 17 Նոյեմբ., Թ. 2501։

է) Լուգանսկի հայ գաղութի անդամ Պետրոս Մանուչակեանի փոխադրած յօգուտ գաղթականների հինգ հարիւր (500) ռուբ.։ 17 Նոյեմբ., Թ. 2502։

ը) Մոսկուայի Արսէն քահանայ Սիմէօնեանի միջոցով Պոպովեան ժառանգներից, ի յիշատակ հանգուցեալ Տիրուհի Պոպովեանի, յօգուտ գաղթականների տասն հազար (10,000) ռուբլի։ 17 Նոյեմբ., թ. 2503։

թ) Թեմիր-Խան-Շուրայից Սերգէյ Սարումեանի միջոցով Արտաշէս Պօղոսեանից յօգուտ գաղթականների մի հարիւր (100) ռուբլի։ 17 Նոյեմբ., թ. 2504։

Կոնդակ Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդի անունով, որով արտօնուեց բանալ Լօռու գաւառի Այգեհատ գիւղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց, համաձայն հայ համայնքի որոշման։ 17 Նոյեմբ., թ. 2505։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Գրիգոր Մեսանիկեանի անունով՝ Կոջոր գիւղի դպրոցի պահպանութեան օգտին տասն տարի ժամանակով, ամսական երեսուն ռուբլի նուիրաբերելու համար։ 17 Նոյեմբերի, թ. 2508։

Դիւանի գրութիւն Տփխիսի Կուսանաց անապատի մայրապետ Կոյս Հռիփսիմէ Թայիրեանի անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Կոջորի ծխական դպրոցի պահպանութեան համար միանուագ երկու հարիւր ռուբլի նուիրելու համար։ 17 Նոյեմբ., թ. 2509։

Դիւանի գրութիւն պ. Տիգրան Աֆրիկեանի անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Կոջորի ծխական դպրոցի պահպանութեան համար միանուագ երկու հարիւր ռուբլի նուիրելու առթիւ։ 17 Նոյեմբ., թ. 2510։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի շտեմարանապետ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած մի հարիւր քառասուն եօթ ռուբ. 30 կոպ. (147 ռ. 30 կ.), գոյացած մորթիների վաճառումից, պա-

տուիրուեց մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 18 Նոյեմբերի, Թ. 2511։

Դիւանի գրութիւններ Երևանի փոխ—Թեմակալի, Վրաստանի Առաջնորդի և Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որոնցով յանձնարարուեց կարգադրել կանոնաւոր եկեղեցի տանել գաղթական հայ որբերին, որպէս զի նոցա մատաղ հոգիների մէջ այժմեանից աճի և զարգանայ եկեղեցասիրութիւնն ու աստուածպաշտութիւնը։ 21 Նոյեմբ., Թ. Թ. 2530, 2531, 2532։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նուխու Հայոց Հոգևոր կառավարութեան փոխադրած յօգուտ գաղթականների, հանգանակուած փոխանորդութեան գիւղերից, հինգ հարիւր տասն և ութ ռ. 04 կ. (518 ռ. 04 կոպ.)։ 22 Նոյեմբ., Թ. 2536։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Համզաչիմանի փոխատու—խնայողական ընկերութեան վարչութեան փոխադրած յօգուտ Հայաստանի վերաշինութեան քառասուն երկու ռուբ. 54 կ. (42 ռ. 54 կ.)։ 23 Նոյեմբ., Թ. 2545։

Դիւանի շրջաբերական գրութիւններ Բեսսարաբիայի, Աստրախանի, Վրաստանի, Շամախու Հայոց Թեմակալ Առաջնորդների և Երևանի փոխ—Թեմակալի, Ղարաբաղի Թեմի ժամ. կառավարչի անունով, որոնցով, համաձայն Նորին Վեհափառութեան բարեհաճ կարգադրութեան, յանձնարարուեց՝ ի նկատի ունենալով հայ քահանայական դասի տնտեսական անձուկ վիճակը, ներկայ պատերազմի պատճառով առաջացած թանկութեան շնորհիւ, կոչ ուղղել հայ ժողովրդին, որ մօտեցող տօն օրերին առատ նուիրաբերութեամբ օգնեն իրենց հոգևոր հայրերին, որպէս զի նոքա տնտեսական հոգսերից ազատ մնալով կարողանան ամբողջապէս նուիրուել իրենց հովուական անմիջական պարտաւորութիւններին։ 25 Նոյեմբ., Թ. Թ. 2554—2559։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի վարչու-

թեան անունով, որով յանձնարարուեց ուղարկել Եգիպտոսի Պորդ-Սայիդ քաղաքի Վարդան քահանայ Վարդերեսեանին Ս. Էջմիածնի 1917 թ. օրացոյցից երեք օրինակ: 25 Նոյեմբ., թ. 2563:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գանձակի Հայոց Հոգեւոր Կառավարութեան փոխադրած գաղթականների օգտին եօթն (7) ռուբլին: 26 Նոյեմ., թ. 2567:

Դիւանի գրութիւն Երեւանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց մի քահանայի ձեռքով Ս. Միւռոն ուղարկել Հին-Նախիջեւանի փոխանորդին՝ վիճակի եկեղեցեաց գործածութեան համար: 26 Նոյեմբ., թ. 2569:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տատեանա Նիկօլաեւնայի Վորոնէժի հայ կանանց Կոմիտէի փոխադրած, յօգուտ գաղթականների՝ մի հազար (1000) ռուբլին: 28 Նոյեմբ., թ. 2671:

Դիւանի գրութիւն Երեւանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց հողալ Հայթաղ գիւղի եկեղեցու կարիքները՝ գործադրուած եկեղեցական զգեստներ տալու նկատմամբ: 29 Նոյեմբ., թ. 2575:

Դիւանի գրութիւն յանուն Ս. Էջմիածնի Երզայրական Օգնութեան Որբանոցների Վարչութեան անունով, որով ուղարկելով Զիկագոյի Թեմակալ հոգիւ Տ. Վահրամ վարդապետ Նազարէթեանի գրութիւնը՝ յանձնարարուեց տեղեկութիւն տալ Դիւանին Մշեցի Գեղամ և Արմենակ Գեւորգեանների որբերի մասին: 29 Նոյեմբ., թ. 2580:

Դիւանի գրութիւն Գանձակի Աղքատախնամ Ընկերութեան Վարչութեան անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնը՝ ապագայում արդիւնաւէտ գործունէութիւն ցոյց տալու համար՝ յօգուտ հայ աղքատ դասակարգի, որի շահերը պաշտպանելու համար և կոչուած է Ընկերութիւնը: 29 Նոյեմբ., թ. 2581:

Դիւանի գրութիւն յանուն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի, որով ուղարկուեց ի ստուգութիւն Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի ուղարկած 4000 ռուբ. ծախսերի փաստաթղթերը: 29 Նոյեմբ., Թ. 2582։

Կոնդակ Սինօդի անունով, որով պատուիրուեց մուծել 1914 Թ. Հոկտ. 15-ի Թ. 1644 Կոնդակով Սինօդին տուած եկեղեցական և ազգային տօների ցուցակի մէջ Նոյեմբերի 21-ին տօնուող Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճար տօնը և այդ ցուցակի պատճէններն ուղարկել բոլոր Ռուսահայ Թեմական Առաջնորդներին ի հրահանգութիւն և ի կատարումն: 29 Նոյեմբ., Թ. 2584:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Յովհաննէս Մելիք-Յակոբեանի փոխադրած յօգուտ գաղթականների երեք հարիւր (300) ռուբլին: 2 դեկտ., Թ. 2601:

Դիւանի գրութիւն պ. Հ. Առաքելեանի անունով, որով յանձնարարուեց փոխադրել Նորին Սրբութեան անունով գաղթականների օգտին ստացուած և նորա մօտ մնացած մի հազար չորս հարիւր եօթանասուն և ութ (1478) ռ.: 2 դեկտ., Թ. 2602:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Կենտրոնական Ուսումն. Յանձնաժողովի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութիւնը բարեհաճեց թոյլատրել տպագրել Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ծրագրից այլ ևս մի հազար երկու հարիւր օրինակ: 2 դեկտ., Թ. 2615:

Դիւանի գրութիւն Շամախու Հայոց Թեմի Տ. Առաջնորդի անունով, որով յանձնարարուեց կարգադրել Բալախանուց վերադարձնել Պարսկա-Հնդկաստանի Թեմի Տ. Թադէոս քահանային, որին պահանջում է Առաջնորդական Խորհրդարանը: 3 դեկտ., Թ. 2618:

Դիւանի գրութիւն Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութիւնը, համաձայն

նորա գրաւոր խնդրի, բարեհաճեց արձակել Մայր Տաճարի Վերանորոգութեան Յանձնաժողովի Նախագահի պաշտօնից։ 3 դեկտ., թ. 2622։

Դիւանի գրութիւն Տ. Մատթէոս եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութեան հրամանով կարգուած է նա Մայր Տաճարի Վերանորոգութեան Յանձնաժողովի Նախագահ։ 3 դեկտ., թ. 2623։

Դիւանի գրութիւն Վանական Կառավարութեան անունով, որով յանձնարարուեց Մայր Աթոռի հիւրատան բոլոր գոյքը պատշաճ ցուցակով յանձնել նոր կարգուած հիւրընկալ Տ. Եղիշէ վարդապետին։ 5 դեկտ., թ. 2650։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութիւնը թոյլատրեց հրաւիրել, որպէս անդամ-քարտուղար Յանձնաժողովի պ. Արշաւիր Ճաւարշեանին։ 5 դեկտ., թ. 2654։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Հայկական 6-րդ հրացանաձիգ գումարտակի հրամանատար փոխ-գնդապետ Միքայէլ Մելիք-Մուրադեանի հայ սպաների կողմից փոխադրած երեք հարիւր (300) ռուբլին, որպէս երկու փախստական որբերի ծեմարանում սովորելու վարձ։ 7 դեկտ., թ. 2676։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ախալցխայի Հոգևոր Կառավարութեան փոխադրած յօգուտ գաղթականների հինգ ռուբ. 97 կ. (5 ռ. 97 կ.)։ 7 դեկտ., թ. 2677։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ամերիկայի Բրիտապըրկի Նպաստամատոյց Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականների վեց հարիւր քսան և մի ռուբլին (621 ռ.)։ 7 դեկտ., թ. 2678։

Դիւանի գրութիւն Թաւրիզի Արամեան և Աննայեան դպրոցների հոգաբարձութեան անունով, որով յայտնուեց, որ Դպրոցական Դրամագլխի տոկոսներից որոշած նպաստը

կտրուի Ատպատականի Թեմի ամենաչքաւոր դպրոցներին։ 8 դեկտ. Թ. 2687։

Դիւանի գրութիւն Երեւանի փոխ—թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով խնդրուեց թեմում գտնուած Վանայ քահանաներին առաջարկել վերադառնալ իրենց պաշտօնավայրերը։ 8 դեկտ., Թ. 2688։

Նորին Սրբութեան մակագրութիւն Երեւանի փոխ—թեմակալի այս դեկտեմբեր 3-ի Թ. 2550 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք Սինոդին ուղարկել Դպրոցական դրամագլխի տոկոսներից Երեւանի փոխ—թեմակալին՝ բաշխելու թեմի աղքատ դպրոցներին տարեկան հինգ հազար (5000) ռուբլի, ըստ այս ցուցակի և հոգաբարձութեանց պաշտօնական ստացագրերն ուղարկել Դիւանիս՝ Մեզ մատուցանելու համար»։ 8 դեկտ., Թ. 2696։

Դիւանի գրութիւն Տ. Ջաւէն վարդապետի անունով, որով յանձնարարուեց տեղեկանալ, եթէ Ուչքիլիսէ վանքի անօթներն ու սպասները Կարին են տարուած՝ ցուցակագրել և բերել իւր հետ Ս. Էջմիածին։ 8 դեկտ., Թ. 2699։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդի անունով, որով յանձնարարուեց միջնորդութիւն յարուցանել գեներալ Թամամշեանի առաջ, որ Ալաշկերտի հովտի գաղթականներին ևս պետական նպաստ և հագնելու շոր տրուի։ 8 դեկտ., Թ. 2700։

Դիւանի գրութիւն Լարինսկի I կազակ գնդի հրամանատարի անունով, որով յայտնելով կազակների ձեռքով Ս. Էջմիածին ուղարկած Հայոց եկեղեցու երկու զանգերի մասին՝ շնորհակալութիւն յայտնուեց նորա դէպի Հայոց եկեղեցին ցոյց տուած բարի վարմունքի համար։ 10 դեկտ., Թ. 2712։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին Ամերիկայից Աբրահամ Մելոյեանի փոխադրած մի հարիւր ռուբլին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով յանձնել Մելքոն Ս. Մելոյեանին։ 10 դեկտ., Թ. 2713։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդի անունով, որով յանձնարարուեց բանակցել Քաղաքների Միութեան Կովկասի ներկայացուցչի հետ, որ Միութեան հաշուով նորոգել տան Սարիղամիշի հրդեհուած դպրոցական շինութիւնը: 10 դեկտ., Թ. 2717:

Դիւանի գրութիւն Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց Տաճարում պահելու համար Գիւտ աւագ քահանայ Աղանեանի մատուցած արծաթեայ խաչը՝ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի մասունքով: 10 դեկտ., Թ. 2718:

Կոնդակ Սինոդի անունով, որով առաջադրուեց կարգադրել ուղարկել Տփխիսի Բիւրոյի փոխ-նախագահ պ. Աղէքսանդր Խատիսեանի անունով, յօգուտ վիրաւոր և սպանուած հայ կամաւորների ստացուած քսան և եօթն հազար հինգ հարիւր քսան և երկու ռուբ. 85 կ. (27,522 ռ. 85 կ.): 12 դեկտ., Թ. 2736:

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, փոխադրել Տփխիս Տիգրան Նազարեանի անունով յօգուտ «Հրատապ-Սփոփանքի», գաղթականական գումարից, երեք հազար (3000) ռուբլի: 12 դեկտ., Թ. 2738:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Սուրբ Խաչ եկեղեցու Հոգաբարձութեան փոխադրած յօգուտ գաղթականների չորս հարիւր երեսուն և հինգ ռուբլի 16 կ. (435 ռ. 16 կ.): 13 դեկտ., Թ. 2763:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աքքերմանի Երեմիա քահանայ Ապրիլեանի փոխադրած յօգուտ գաղթականների երեք հարիւր (300) ռուբլի: 13 դեկտ., Թ. 2764:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գօրու ծխական Հոգաբարձութեան փոխադրած յօգուտ գաղթականների յիսուն (50) ռուբլի: 15 դեկտ., Թ. 2767:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Ղզլարցի Տիկին Ովսաննա Մամաջանեանի փոխադրած յօգուտ գաղթականների երկու հարիւր (200) ռուբլի։ 15 դեկտ., Թ. 2768։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին կարգադրել աւելացնել Անիի վանահայր Տ. Միքայէլ վարդապետի ռոճիկն ամսական 5-ական ռուբլի։ 15 դեկտ., Թ. 2769։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մթերանոցի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի անունով, որով ուղարկուեց մթերանոցում պահելու Լարինսկի I կազակ գնդի կազակների բերած երկու զանգերը՝ Հայոց եկեղեցու։ 15 դեկտեմբ., Թ. 2773։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Կաւկազսկի» բանկի միջոցով Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդի փոխադրած յօգուտ գաղթականների ինն հարիւր երեսուն և ութ ռուբ. 70 կոպ. (938 ռ. 70 կ.)։ 15 դեկտեմբ., Թ. 2780։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նոր-Նախիջևանի Տ. Մկրտիչ աւագ քահանայ Տէր-Յակովբեանի փոխադրած յօգուտ գաղթականների երեք հարիւր (300) ռուբլի։ 15 դեկտ., Թ. 2781։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Վլադիկավկազից Սարգիս Կաժենիկեանի փոխադրած յօգուտ գաղթականների մի հազար (1000) ռուբլի։ 15 դեկտ., Թ. 2782։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Րիչմոնդ քաղաքի Օժանդակ Մարմնի Վարչութեան փոխադրած երեք հարիւր տասն (310) ռ.՝ յօգուտ գաղթականների։ 15 դեկտ., Թ. 2783։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լուգանսկից Պետրոս Մանուշակեանի փոխադրած

յօգուտ գաղթականների՝ մի հազար (1000) ռուբլի։ 15 դեկտեմբ., Թ. 2784։

Դիւանի գրութիւն Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց Մ. Տաճարում գործածելու համար Ռոստովի վաճառական Վարդան Տէր-Սահակեանի նուիրած մի շուրջառ և մի զոյգ բազպաններ։ 17 դեկտ., Թ. 2791։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած յօգուտ որբերի ութն հազար երեք հարիւր ութսուն և հինգ (8385) ռուբլին, որ ստացուած է Վրաստանի Հայոց Թեմակալ Առաջնորդից։ 19 դեկտեմբ., Թ. 2794։

Նորին Սրբութեան մակագրութիւն Գանձակի Հոգևոր կառավարութեան դեկտեմբեր 15, Թ. 2525 յայտարարութեան վրայ (յայտարարութեան հետ ուղարկուած է Նախկին Նորիւն վարդապետի զգեստներն ու եկեղեցական անօթները). «Յայտարարութեանս մէջ յիշուած արկղը, որ փաթաթուած է կտաւով ու կնքուած Գանձակի Հոգևոր կառավարութեան կնքով և Նորա բանալին յանձնելով Սինոդին, պատուիրում ենք պահել այն Մայր Աթոռի Ներքին Գանձարանում ցառանձին տնօրինութիւն Մեր»։ 20 դեկտ., Թ. 2840։

Կոնդակ Տփխիսի, Բագուի, Արմաւիրի, Եկատերինոդարի, Նոր-Նախիջևանի, Մոսկուայի և Պետրոգրադի Հայերին ուղղած, որով յայտնելով Մայր Աթոռի և Գ. Հոգևոր Ճեմարանի տագնապալից դրութիւնն ու մեծաքանակ ծախքերը՝ յորդորուեց դրամական նուիրաբերութեամբ օգնել, որպէս զի Ճեմարանը կարողանայ անթերի շարունակել-պահպանել իւր գոյութիւնը՝ մատակարարելով հայ ուսումնածարաւ երիտասարդութեան լոյս-գիտութիւն։ 20 դեկտ., Թ. 2842։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոդին Ախալցխայի Հոգեւոր Կառավարութեան փոխադրած յօգուտ գաղթականների ինն ռուբ. 06 կոպ. (9 ռ. 06 կ.)։ 21 դեկտ., թ. 2921։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մոսկուայից փաստաբան պ. Մկրտիչ Տէրեանի Տ. Տիրայր Ծ. վարդապետի միջոցով փոխադրած յօգուտ Մայր Աթոռի Գ. Հոգեւոր Ճեմարանի մի հարիւր (100) ռուբլի։ 21 դեկտ., թ. 2922։

Դիւանի գրութիւն Ալէքսանդրապոլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետի անունով, որով յանձնարարուեց յայտնել «Տարօն» նորակազմ ընկերութեան անդամներին Նորին Վեհափառութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը։ 21 դեկտ., Թ. 2929։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին որբերի պահպանութեան համար ութն հազար երեք հարիւր ութսուն և հինգ (8385) ռուբլի։ 21 դեկտ., թ. 2931։

Դիւանի գրութիւն Տամանսկի I գնդի գնդապետի անունով, որ գտնուում է Կարսի շրջանի Բաշ-Շիրակ գիւղում, որով խնդրուեց կարգադրել ուղարկել Ս. Էջմիածին Դերբեկ գիւղի Հայոց եկեղեցու զանգը, որ բերուած է գնդի հետ։ 21 դեկտ., թ. 2937։

Դիւանի գրութիւն Չիկագօ քաղաքի (Ամերիկա) հոգեւոր հովիւ Տ. Վահրամ վարդապետի անունով, որով տեղեկութիւն հաղորդուեց, համաձայն Նորա խնդրի, որ Մշեցի Արմենակ և Գեղամ Պետրոսեան որբերը գտնուում են Աշտարակի Մոսկուայի Հայոց Կոմիտէի որբանոցում։ 21 դեկտ., թ. 2942։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Գէորգ վարդապետի անունով, որով ուղարկուեց մատենադարանում պահելու պ. Անդրանիկի 1915 թ. Բաշքալէի կողմերից բերած հետեւեալ գրքերը՝ 1) Աւետարան,

կաշեպատ կազմով, սկզբից և վերջից պակասաւոր, գրուած «ի Գեաւղն որ կոչի Ծիծանց», 2) Աւետարան, կաշեպատ կազմով, անթերի, «գծագրեալ..... ձեռամբ.... Դաւիթ... երիցի... ի թվականիս Հայոց Ջիբ [=1473]... ի գիւղս որ կոչի Սրկզունս...» երեսն արծաթապատ, Մարիամ Աստուածածնի պատկերով, 3) Աւետարան կաշեպատ կազմով, անթերի, գրուած «ձեռամբ.... ահարոնի... գրչի.... ի թուին Ռժե (=1566)... իգիւղն որ կոչի Փակաջուկ» Երես արծաթապատ «ի կոնս» Ս. Աստուածածնի: 21 դեկտ. Թ. 2946:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից Բալուի Սագրատ գիւղի Կրթասիրաց Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականների եօթն հարիւր տասն և հինգ (715) ռուբլի: 23 դեկտ., Թ. 2949:

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց Թեմական Առաջնորդի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Վեհափառութեան հրամանի, խնդրել Տփխիսի Նահանգապետից, որ արագացնել տայ Ե. Նազիրեանի կտակի գործի ընթացքը դատարանում: 24 դեկտ., Թ. 2957:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ճեմարանի Վարչութեան անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութիւնը բարեհաճեց հաստատել Մանկավարժական Ժողովի որոշումը՝ աշակերտութիւնից արձակելու Ցարութիւն Խաչատրեանին և Գրիգոր Պօղոսեանին, նոցա ծուլութեան ուսման մէջ և անուղղայ վարքի համար: 24 դեկտ., Թ. 2959:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Եգիպտոսի Հայոց Թեմական Առաջնորդի փոխադրած յօգուտ գաղթականների ինն հարիւր ութսուն և մի ռուբ. 70 կ. (981 ռ. 70 կ.): 24 դեկտ., Թ. 2962:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եթովպիոյ Ադիս-Աբաբա Ընթերցասիրաց Միութեան յօգուտ Հայ կամաւորների փոխադրած մի հարիւր

յիսուն և չորս ռուբ. 42 կ. (154 ռ. 42 կ.) 300 ֆրանկ, 24 դեկտ., թ. 2963։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Սիմֆերոպոլի Հայ կանանց կոմիտէի յօգուտ գաղթականների փոխադրած երկու հազար եօթն հարիւր յիսուն և երկու ռուբ. 20 կ. (2752 ռ. 20 կ.), 24 դեկտ., թ. 2964։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ճեմարանի Վարչութեան անունով, որով ուղարկուեց 240 օրինակ Տ. Տիրայր Ծ. վարդապետի թարգմանած «Այց Քէմբրիջի համալսարան» գրքից՝ բաժանելու աշակերտներին Նոր-տարուայ առթիւ։ 24 դեկտեմբ., թ. 2966։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Արաբկերցի Յովհաննէս Կիւրեղեանի գաղթականների օգտին նուիրած մի հարիւր (100) ռուբլին։ 24 դեկտեմբ., թ. 2967։

Կոնդակ Սինոդի անունով որով պատուիրուեց այս տարուայ սեպտ. Ամերիկայի Նահերի Պաշտպանութեան Միութեան փոխադրած քսան և մի հազար ինն հարիւր հինգ ռուբ. 60 կ. (21905 ռ. 60 կ.), համաձայն Միութեան իսկ որոշման, միացնել Դպրոցական Դրամագլխին։ 26 դեկտ., թ. 2969։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին պ. Տիգրան Նազարեանի միջոցով տիկին Հեղինէ Կրասիլնիկեանի փոխադրած գաղթականների օգտին հինգ հարիւր (500) ռուբլին։ 28 դեկտ., թ. 2977։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին եղբ. Թումանեանների Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով փոխադրած յօգուտ գաղթականների՝ երկու հազար ութ հարիւր (2800) ռուբլին։ 29 դեկտ., թ. 2978։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Հայկական I հրացանաձիգ գնդի հայ սպաների

Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան միջոցով որբերի պահպանութեան հօկտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար մի հարիւր յիսուն (150) ռ.: 29 դեկտ., Թ. 2979:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Նոր-Նախիջեւանի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան փոխադրած յօգուտ գաղթականների մի հազար (1000) ռուբլին: 29 դեկտ., Թ. 2980:

Դիւանի գրութիւն Երեւանի փոխ-Թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով խնդրուեց յայտնել Եօնջալու գիւղի Յովհաննէս քահանայ Տէր-Յովհաննիսեանին, որ գեներալ Թամամշեւի կարգադրութեամբ ուղարկուած է Ալաշկերտի հովտի գաղթականներին հագնելու շորեր՝ մեծերի և փոքրերի համար: 31 դեկտ., Թ. 2987:

Դիւանի գրութիւն Տ. Զաւէն վարդապետի անունով, որով յանձնարարուեց Կարնից վերադարձնել Սարիղամիշ Տ. Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանին, քանի որ վերջինիս այնտեղ մնալն այլ եւս կարեւոր չէ: 30 դեկտ., Թ. 2992:

Դիւանի գրութիւն Գանձակի Հոգեւոր Կառավարութեան անունով, որ յայտնուեց, որ նորա ուղարկած նախկին Կորիւն վարդապետի զգեստներն ու անօթները ստացուած են և Նորին Սրբութեան հրամանով, Սինօդի առանձին արձանագրութեամբ՝ արկղը, առանց բանալու, դրուած է Մայր Աթոռի Ներքին Գանձարանում ցառանձին անօրինութիւն: 31 դեկտ., Թ. 3003:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինօդին կարգադրել տալ Մայր Աթոռի Գ. Հոգեւոր Ճեմարանի Վարչութեան՝ 1916/17 ուսումն. տարուայ ծախքերի համար՝ քսան հազար (20.000) ռ.: 31 դեկտ., Թ. 3012: